

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ
ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
«ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ» ԱՄԲԻՈՆԻ
2016-2017 ՈՒՍՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ
ՈՒՍՈՒՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

Ամբիոնն ունի 17 աշխատակից, այդ թվում՝

1. Հարությունյան Լիանա Միքայելի	մանկ. գիտ. թեկնածու, ասիստենտ, ամբիոնի վարիչ
2. Միքայելյան Վլադիմիր Հակոբի	հոգ. գիտ. դոկտոր
3. Ասմարյան Քնարիկ Ժորայի	մանկ. գիտ. թեկն., դոցենտ
4. Ավագիմյան Հայկ Ռոդիկի	հոգ. գիտ. թեկն., դոցենտ
5. Բրուտյան Վաչիկ Արամայիսի	մանկ. գիտ. թեկն., դոցենտ
6. Կոբեյան Արթուր Թենգիզի	հոգ. գիտ. թեկն., դոցենտ
7. Սարգսյան Լևոն Կարոյի	հոգ. գիտ. թեկն., դոցենտ
8. Սարգսյան Վաչագան Պետրոսի	բժշկ. գիտ. թեկն., դոցենտ
9. Սարգսյան Դիանա Յուրայի	հոգ. գիտ. թեկն., ասիստենտ
10. Քամայան Աննա Սերյոժայի	հոգ. գիտ. թեկն., ասիստենտ
11. Հովակիմյան Աննա Գիգուշի	ասիստենտ
12. Բաղդասյան Մելանյա Էդվարդի	դասախոս
13. Մելիքսեթյան Վիկտորյա Գրիշայի	դասախոս
14. Նազինյան Նարինե Գագիկի	դասախոս
15. Սարգսյան Աիդա Գուրգենի	դասախոս
16. Միմոնյան Էդիտա Սպարտակի	դասախոս
17. Ստեփանյան Լիլիթ Ռևիկի	գործավար- օպերատոր

«Մանկավարժություն և հոգեբանություն» ամբիոնը սպասարկում է մասնաճյուղի բոլոր ֆակուլտետներին:

Հաշվետու 2016-2017 ուստարվա ժամանակահատվածում ամբիոնում ներկայացվել են առարկայական փաթեթներ /պորտֆոլիոներ/, որոնց մեջ տեղայնացվել են ժամանակակից գիտական տեսությունները և հայեցակարգերը:

2016-2017 ուստարվա ընթացքում դասախոսները հանդես են եկել գիտական զեկույցներով, կազմակերպվել են տեսագործական դասեր, միջոցառումներ, որից

հետո կատարվել են քննարկումներ, դասախոսների միջև տեղի է ունեցել փոքրձի փոխանակում:

2016-2017 ուստարում ամբիոնի դասախոսները հրատարակել են հոդվածներ, ուսումնական ձեռնարկներ, մենագրություններ, ստացել են գիտական աստիճաններ և կոչումներ:

Հ/հ	Ատենախոս՝ ազգանուն, անուն, հայրանուն	Շնորհված գիտական աստիճանը (թեկնածու, դոկտոր)	Ատենախոսության վերնագիրը	Շնորհված գիտական աստիճանի վկայագրի ամսաթիվը
1	Քամայան Աննա Սերյոժայի	հոգեբանական գիտությունների թեկնածու, ասպիստենտ	Մթեր-կայունության ընթացքի դրսևորման հոգեբանական առանձնահատկությունները երիտասարդության տարիքում /սահմանամերձ գոտու օրինակով/	հունվարի 25-ին, 2017թ.
2	Միքայելյան Վլադիմիր Հակոբի	հոգեբանական գիտությունների դոկտոր	Հոգեբանական ժամանակը անձի նորմայում և ախտաբանության մեջ	փետրվարի 10-ին, 2017թ.
3	Սարգսյան Լևոն Կարոյի	դոցենտի գիտական կոչում	հոգեբանության մասնագիտությամբ	ապրիլի 21-ին, 2017թ.
4	Բրուտյան Վաչիկ Արամայիսի	մանկավարժական գիտությունների դոկտոր		

2016-2017 ուստարվա ընթացքում ամբիոնում կատարվել են հետևյալ ուսումնագիտական աշխատանքները.

- ներկայացվել են առարկայական փաթեթներ /պորտֆոլիոներ/,
- վերանայվել, թարմացվել և հաստատվել են ընթացիկ քննությունների, ընթացիկ ստուգումների, հանրագումարային քննությունների հարցաշարերը,
- ներկայացվել է դասախոսի անհատական զարգացման պլանը,
- քննարկվել և հաստատվել են կուրսային և ավարտական աշխատանքների թեմաները,
- ներկայացվել և հաստատվել են ամփոփիչ պետական քննության հարցաշարերը,
- հաշվառվել են դասախոսների առարկայական մուտքերը՝ ընթացիկ քննություններից առաջ,
- կատարվել են դասալսումներ ամբիոնի վարիչի կողմից, ինչպես նաև փոխադարձ դասալսումներ դասախոսների կողմից,
- ուսումնական և աշխատանքային պլանների քննարկում, վերանայում,
- անհատական ծանրաբեռնվածությունների կազմում, հաստատում
- կազմակերպվել և իրականացվել են մանկավարժական և արտադրական պրակտիկաների անցկացման ընթացքը :

Ամբիոնի գործունեությունը ճիշտ կազմակերպելու համար կազմվել են հետևյալ աշխատանքային գրաֆիկները և ժամանակացույցերը.

- փոխադարձ դասալսումների գրաֆիկ,
- դասալսումների գրաֆիկ,
- կուրսային և ավարտական աշխատանքների խորհրդատվության ժամանակացույց, հանդիպման գրաֆիկ,
- դասախոսական կազմի զբաղվածության գրաֆիկ՝ փոխարինողների ցուցակով,
- դասախոսական կազմի զբաղվածությամբ գրաֆիկ՝ այլ բաժիններում,
- լրացուցիչ պարապմունքների ժամանակացույց,
- ամբիոնի կադրային ներուժ /հաստիքներ, պաշտոններ, այլ տվյալներ/,
- կուրսային և ավարտական աշխատանքների գրաֆիկ /ղեկավար-ուսանող-թեմա/:

Ամբիոնը կազմակերպել է մի շարք միջոցառումներ, կատարվել են ուսումնաճանաչողական այցեր, դասախոսները հանդես են եկել գիտական զեկույցներով.

1. 2016թ. սեպտեմբերի 30-ին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում կայացավ մասնագիտական ֆիլմի դիտում և քննարկում:Ներկա էին ամբիոնի դասախոսներ և ուսանողներ:

Ֆիլմը՝ «Անիծվածների կացարանը», հոգեբուժարանում գործող մեթոդների, դրանց հոգեբանական ազդեցության և հոգեկան անառողջություն ունեցող անձանց նկատմամբ հոգեբանական վերաբերմունքի մասին էր:

Ֆիլմում ներկայացված էին հոգեբանական թերապևտիկ միջոցների արդյունավետությունը, հոգեբանական զրույցի դերը տարբեր հոգեկան ախտանիշների բուժման համար, ինչպես նաև հոգեկան անառողջություն ունեցող անձի հանդեպ հոգեբանական վերաբերմունքի փոփոխության և անկանխակալ վերաբերմունքի ձևավորման, սիրո և ջերմության, մարդկային արարքների հասկացման միջոցով արդյունքների հասնելը:

Ֆիլմի դիտումից հետո տեղի ունեցավ քննարկում, ելույթ ունեցան Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ, մ.գ.թ., ասիստենտ Լ. Հարությունյանը, ամբիոնի ասիստենտներ, հոգեբ. գիտ. թեկնածուներ Լ. Սարգսյանը և Դ. Սարգսյանը:

2. 2016թ. հոկտեմբերի 5-ին՝ Ուսուցչի օրվա կապակցությամբ, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում կայացավ տոնական միջոցառում, որը կազմակերպել էր կրթական ծրագրերի գծով տնօրենի խորհրդական, մանկ. գիտ. թեկն., Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դասախոս, դոցենտ՝ Վ. Բրուտյանը:

Ներկա էին մասնաճյուղի վարչական և պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչները, ուսանողներ, հյուրեր, հատուկ հրավիրված էին

մասնաճյուղում նոր ներդրված «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության ուսանողներին դասավանդած դասվարները:

Ուսուցիչներին ողջույնի, շնորհավորանքի և երախտիքի խոսք ասաց ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն Ս. Ա. Առաքելյանը:

3. Ամբիոնին կից ստեղծվել է Գործնական հոգեբանության ակումբ, որը հնարավորություն կտա կազմակերպել հանդիպումներ ուսանողների հետ, որտեղ կլոր սեղանի շուրջ կքննարկվեն կյանքի իրավիճակներ, կիրականացվեն հոգեբանական վարժություններ, կկազմակերպվեն ազատ բանավեճեր հոգեբանական թեմաներով:

Ակումբի ստեղծման նպատակն է զարգացնել ուսանողների կառուցողական շփման ունակությունները՝ կյանքի զանազան իրավիճակներ քննարկելու, անհատական խորհրդատվություններ տալու, հոգեբանական վարժություններ, թրեյնինգներ, կլոր սեղաններ, հոգեբանական թեմաներով ազատ բանավեճեր կազմակերպելու միջոցով:

Ներկայացվել է Գործնական հոգեբանության ակումբի ժամանակացույցը և ծրագիրը, որը բաղկացած էր հետևյալ բաժիններից՝

- թրեյնինգների բաժին,
- գիտական բաժին,
- հոգեթերապիայի բաժին:

4. 2016թ. նոյեմբերի 7-ին Հումանիտար գիտությունների ֆակուլտետում տեղի ունեցավ «Հոգեբանամանկավարժական շտկման ուղղությունները» թեմայով տեսագործնական բաց դաս, որը վարեց Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դասախոս Էդիտա Սիմոնյանը:

Բաց դասին ներկա էին ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն Ս. Ա. Առաքելյանը, Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչը, դասախոսներ և ուսանողներ:

Նախ դասախոսը ներկայացրեց դասի թեման, նպատակը և խնդիրները: Այա ուսանողները համապատասխան շնորհանդեսների ուղեկցությամբ ներկայացրին «Ավագաթերապիա», «Նկարչաթերապիա», «Երաժշտաթերապիա», «Հեքիաթաթերապիա» թեմաներով զեկուցումներ:

5. 2016թ. նոյեմբերի 16-ին՝ ուսանողների տոնի նախօրեին, Գոշավանքում տեղի ունեցավ ԵՊՀ ԻՄ-ի առկա և հեռակա ուսուցման «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության առաջին կուրսեցիների՝ Ուսուցչի երդման հանդիսավոր արարողությունը:

Երդման արարողությանը մասնակցում էին Տավուշի մարզի հոգևոր դասի, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի վարչական և պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչներ, ուսանողներ, ուսուցիչներ, առաջին դասարանցիներ, լրագրողներ, հյուրեր:

Ներկաները նախ մոմ վառեցին 12-13-րդ դդ. Գետիկ գետի ափին կառուցված հայոց հոգևոր և կրթամշակութային նշանավոր կենտրոնում, ապա հայր Սամվել Մխիթարյանի աղոթքով սկսվեց երդման արարողությունը:

ԵՊՀ ԻՄ-ի շնորհալի ուսանողները ներկայացրին հոգևոր երգեր:

Ելույթ ունեցավ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրեն Ս. Ա. Առաքելյանը՝ Ուսուցչի երդման կապակցությամբ շնորհավորելով «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտությամբ մեր առաջին ուսանողներին, ընդգծեց կրթության բնագավառի ներկայացուցիչների ամենօրյա տքնաջան ու պատասխանատու աշխատանքի կարևորությունը, նրանց ունեցած անգնահատելի դերն ու ավանդը սերունդների կյանքում:

6. 2016թ. նոյեմբերի 17-ին ԵՊՀ ԻՄ-ի «Մանկավարժություն և հոգեբանություն» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողները՝ դասախոս Վիկտորյա Մելիքսեթյանի ղեկավարությամբ, «Մանկավարժական հոգեբանություն» դասընթացի գործնական դասն անցկացրին Իջևանի թիվ 1 հիմնական դպրոցում: Գործնական դասի ընթացքում ուսանողները, բաժանվելով երեք խմբի, տարրական և միջին դասարաններում իրականացրին դասալսումներ, ապա կայացավ մանկավարժների հետ նրանց հանդիպումը:

7. Ամբիոնի վարիչի գլխավորությամբ Մ/Հ բաժնի ուսանողները գործնական, ուսումնաճանաչողական այցեր են կատարել հետևյալ հաստատություններ՝

- «Հուլյսի կամուրջ» ՀԿ երեխայի զարգացման ցերեկային կենտրոն,
- «ՍՈՍ մանկական գյուղեր» Իջևանի մասնաճյուղ,
- Իջևանի ավագ դպրոց, Իջևանի թիվ 1 դպրոց:

8. Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դասախոս, մանկ.գիտ.թեկն., դոցենտ Վ.Բրուսյանը ներկայացրել է մենագրություն «Իրավաբանական մանկավարժությունը ՀՀ իրավապահպան համակարգում» թեմայով, 2016 -272էջ:

Մենագրության մեջ հանգամանորեն քննարկվում են մանկավարժության և իրավապահպան գործունեության համակցության խնդիրները, ինչպես նաև բարձրագույն իրավաբանական կրթության հիմնախնդիրները:

9. 2016թ. նոյեմբերի 22-ին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում կայացավ Հոգեբանի օրվան նվիրված միջոցառում, որը կազմակերպվել էր Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի կողմից:

Ներկա էին մասնաճյուղի տնօրենը, Հումանիտար գիտությունների ֆակուլտետի ղեկանը, Մանկավարժության և հոգեբանության, Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնների վարիչները, մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչներ, ուսանողներ:

Ողջույնի խոսք ասաց ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն Ս. Ա. Առաքելյանը՝ Հոգեբանի օրվա առթիվ շնորհավորելով մասնագետներին, ուսանողներին, բոլոր ներկաներին, ընդգծելով հոգեբանի մասնագիտության պատասխանատվությունն

ու կարևորությունը մարդու կյանքում, խրախուսելով նման միջոցառումների կազմակերպումը մասնաճյուղում:

10. 2016թ.-ի դեկտեմբերի 1-ին ՏՄՄ 1-ին կուրսում տեղի ունեցավ «Միավ-
Ձիահ-ով չվարակվելու անհրաժեշտ նախապայմանները» թեմայով
տեսագործնական բաց դաս, որը վարեց Կ. Դովլաթբեկյանը:

Բաց դասին ներկա էին դասախոսներ և ուսանողներ:

Կ.Դովլաթբեկյանը ներկայացրեց թե ինչ կարելի է անել սեփական
առողջությունը պահպանելու, հարազատ ու մտերիմ մարդկանց առողջությունը
չվտանգելու համար: Նա շեշտեց, որ հիվանդության վաղ ախտորոշումը չափազանց
կարևոր է:

11. Ամբիոնը կազմակերպել է ստեղծագործական աշխատանքների՝ էսսեների
մրցույթ հետևյալ թեմայով «Ես չափահաս եմ՝ ծնողներից բաժանման և
ինքնուրույնության ձեռքբերման հոգեբանական խնդիրները»:

Մրցույթին մասնակցել են Մանկավարժության և հոգեբանության առկա և հեռակա
բաժնի ուսանողները, ինչպես նաև այլ ֆակուլտետների ուսանողներ:

Լավագույն աշխատանքները ներկայացվել են խրախուսման:

12. Ամբիոնի դասախոս, հոգեբ. գիտ. թեկն., ասիստենտ Լ.Կ.Սարգսյանը
ներկայացրել է ուսումնամեթոդական ձեռնարկ «Ինքնավերաբերմունքի
հոգեբանություն» թեմայով: Ձեռնարկը նվիրված է անձի հոգեբանության
բնագավառում նոր հայեցակարգի՝ ինքնավերաբերմունքի
հոգեբանությանը: Երևան, Հեղինակային հրատարակություն, 2016թ. -97 էջ:

13. 2017 թվականի մարտի 3-ին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում տեղի ունեցավ
«Չեզարե Լուսբոգո. կենսագրություն և տեսություն» թեմայով սեմինար-
քննարկում, որը վարեց Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի
ասիստենտ, հոգեբանական գիտությունների թեկնածու Դիանա Սարգսյանը:
Քննարկվեցին հանճարեղության և խելագարության, հանցավոր վարքի գենեզիսի
և նորմայի ու ախտաբանության հիմնախնդիրները:

14. Ամբիոնի դասախոս, հոգեբ. գիտ. թեկն., դոցենտ Ա. Թ. Կոբեյանը
ներկայացրել է ուսումնամեթոդական ձեռնարկ «Էթնիկ կոնֆլիկտների
հոգեբանական հիմնախնդիրները» թեմայով: 2017թ.

15. Ամբիոնի դոցենտ, հոգեբանական գիտությունների թեկնածու Վլ.
Միքայելյանը ներկայացրել է ուսումնական ձեռնարկ «Երեխայի հոգեբանական
զարգացումը /տեսություն և պրակտիկա/» թեմայով: Համահեղինակներ՝ Սոնա
Պողոսյան, Արմինե Ադամյան: Երևան, հեղինակային հրատարակություն, 2016թ.,
393 էջ:

16. 2017թ. ապրիլի 12-ին «Անզլերեն լեզու և գրականություն» մասնագիտության
2-րդ կուրսում Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի կողմից
կազմակերպվել էր «Բարձրագույն զգացմունքների դրսևորման հոգեբանական

ձևերը» թեմայով դաս-քննարկում, որը վարեց Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի ասիստենտ, հ.գ.թ Ա. Ս. Քամայանը:

Ներկա էին Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ Լ.Հարությունյանը, պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչներ, տարբեր մասնագիտությունների ուսանողներ:

17. 2017թ. ապրիլի 14-ին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում կայացավ Դասավանդման առաջավոր փորձի փոխանցման և երիտասարդ դասախոսների աջակցման կենտրոնի կազմակերպած՝ «Դասախոսի մասնագիտական հաղորդակցման հոգեբանական հիմունքները» թեմայով դաս-քննարկումը, որը վարեց ամբիոնի ասիստենտ, հ.գ.թ. Դ. Յ. Սարգսյանը:

18. 2017թ. մայիսի 15-ին՝ Ընտանիքի միջազգային օրվա կապակցությամբ, Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի կողմից կազմակերպվել էր «Ընտանիքի ազգապահպան դերն ու նշանակությունը» թեմայով դաս-քննարկում, որը վարում էր ամբիոնի դասախոս Էդիտա Սիմոնյանը:

Էդիտա Սիմոնյանը նշեց դասի նպատակը, հոգեբանության տեսանկյունից ներկայացրեց ընտանիքի՝ որպես ազգապահպան ինստիտուտի դերն ու նշանակությունը:

19. Ամբիոնի դասախոս, հոգեբ.գիտ.թեկն., ասիստենտ՝ Դ.Յ.Սարգսյանը ներկայացրել է կոլեկտիվ մենագրություն «Психологическая безопасность личности в системе человек- транспорт» թեմայով, 2017 - 84էջ:

Դասախոսներին հանձնարարված է մշակել և ամբիոն ներկայացնել 2017-2018 ուստարվա ընթացքում դասավանդվող առարկաների առարկայական փաթեթները /պորտֆոլիոներ/:

Ամբիոնի վարիչ՝ Լ.Հարությունյան